



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍԶԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ**

(Սեպտեմբերի 20-ի հեռուստատեսային ելույթից)

Սիրեցեալ պաւակունք ազգիս հայոց, որ ի Մայր Հայաստան, ի Լեոնային Ղարաբաղ եւ ի ծագս աշխարհի՛ յարտասահման,

Ահա աւարտուեց մեր Հայաստանի Հանրապետութեան գոյառման, հիմնադրութեան հնգամեակը: Ես առաջին հերթին այսօր, երբ նախատօնակն է մեր Հանրապետութեան հնգամեայ հանգրուանին եւ վաղը Տօն է ազգային, ցանկանում եմ փառք տալ Աստծուն, որ մեզի շնորհեց խաղաղութեան, հաստատութեան, ապահովութեան ու ամրութեան հինգ տարիներ՝ անկախ եւ ազատ պետականութեամբ:

Առաջին հերթին իմ խօսքն եմ վեր առաքում դէպի երկինք, դէպի մեր երկնաւոր Հայրը եւ ասում եմ. «Փա՛ռք Քեզ Աստուած, փա՛ռք Քեզ, յաղագս ամենայնի Տէ՛ր, փա՛ռք Քեզ...»:

Ես զգում եմ պատմական իմ հայեցողութեամբ, որ մեր ամբողջ հայոց պատմութեան մէջ այս հինգ տարիները եղան մի շքեղ իրագործում, մի նոր շրջան, որը, իմ համոզումով, պատմութեան մէջ պիտի արձանագրուի ոսկեղէն տառերով: Մենք հինգ տարիներ առաջ, անլի ճիշտ, Ղարաբաղեան շարժումից այս կողմ, մտել ենք մի նոր ճանապարհ: Մենք դուրս ենք եկել մի այնպիսի կեանքի դրութիւնից, որ սովետական կարգերի բռնատիրական իշխանութեան տարիներն էին, եօթանասունն տարիներ: Դուրս եկանք եւ ահաւասիկ այսօր, ողջունում ենք մեր անկախ հանրապետութեան հինգերորդ տարեդարձը:

Ես ուզում եմ բոլորիդ հետ միասին բաժանել իմ այն մտածումը, որ Աստծուն փառք տալուց յետոյ մենք պարտաւոր ենք պատիւ ընծայել այն բոլոր հայ անձերին, կապմակերպութիւններին, որոնք այս շքեղ իրագործման մէջ ունեցան իրենց կարելուք բաժինը: Սոաջին հերթին մեր պետական ղեկավարութեանը՝ գլխաւորութեամբ մեր սիրելի եւ նուիրեալ Նախագահին, եւ բոլոր իր օգնականներին, մեր բանակին, մեր բոլոր այն հաստատութիւններին՝ ակադեմական, համալսարանական, գիտական, արուեստի, մշակոյթի բնագաւառներում, որոնք իրենց ներդրումը կատարեցին հայրենաշինութեան գաղափարով եւ տեսիլքով:

Ես յարգանք եմ ընծայում նաեւ մեր բոլոր հոգեւորականներին, Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի հոգեւորականութեան եւ բոլոր այն եկեղեցական կենտրոններին ու թեմերին, որոնք արտասահմանից զօրավիգ կանգնեցին մեր ապատ եւ անկախ նոր այս հանրապետութեանը եւ Եկեղեցու հոգեւոր ու բարոյական բաժինը բերեցին նրա վերաշինութեան հիմնական ու շատ նուրբ, շատ փափուկ գործի մէջ:

Ես յարգանք եմ ընծայում բոլոր այն հայերին, լինեն նրանք Հայաստանում թէ արտասահմանում, որոնք, անհատապէս եւ նաեւ որպէս միութենական կապմակերպական հաւաքականութիւններ, բերեցին իրենց լայն բաժինը մեր հանրապետութեան կառուցման այս հինգ տարիների շրջանին: Ես նկատի ունեմ բոլոր բարերարներին, յատկապէս արտասահմանի մեր հայութեանը, որ իր լայն բաժինը բերեց հայրենասիրութեան օրինակելի վերաբերումով:

Ես նաեւ յարգանք եմ ընծայում բոլոր այն պետութիւններին, բոլոր այն միջազգային կապմակերպութիւններին եւ Եկեղեցիներին, որոնք բարի կամեցողութեամբ մեր հայրենիքին զօրավիգ կանգնեցին, եւ այս հինգ տարիների խաղաղ եւ ապահով, ինքնակամ ապատ ու անկախ մեր պետութիւնը ամրացուեց, հիմնաւորուեց, արմատաւորուեց: Պիտի ասեմ, որ այս հինգ տարիների ընթացքում ես տեսայ, թէ ինչքա՞ն մեծ իրագործումներ կատարուեցին, որոնց համար պատմութիւնը եւ յատկապէս մենք, որ վկաներն ենք այս բոլորին, չենք կարող լուռ մնալ եւ չասել այն, որ պարտաւոր ենք ասել: Այս հինգ տարիների ընթացքում մենք ունեցանք ապատ ընտրութիւններ, ժողովրդի կամքի ապատ արտայայտութիւն, Ազգային ժողովի (Պառլամենտի) ընտրութիւն, ունեցանք Սահմանդրութեան որդեգրում՝ ժողովրդի կողմից, ունեցանք նուաճումներ վանապան բնագաւառների մէջ, նաեւ հաստատեցինք դեսպանութիւններ արտասահմանում եւ այստեղ ընկալեցինք դեսպանութիւններ՝ աշխարհի այլապան պետութիւններից:

Այս բոլորը նշանակալից նուաճումներ են: Եւ այդ բոլորի շար-

քում եւ ողջունում եւ մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերածաղկումը եւ դրա համար շնորհակալութիւն եւ յայտնում եւ հայրուպետական գնահատանք բոլոր նրանց, ովքեր իրենց լուծան դրեցին, իրենց քրտինքից մի կաթիլ ընծայեցին մեր պետութեան հիմնադրութեան եւ կառուցման այս վճռական հինգ տարիների ընթացքում:

Բնականօրէն այս հիւժըր, այս կոռուանը, որ հաստատուեց ամուր տուեալների վրայ, այս կոռուանի վրայ մենք ունենք շա՛տ-շա՛տ անելիքներ: Այս հինգ տարիները դիւրին տարիներ չեղան մեր պետութեան համար, մեր Եկեղեցու համար, մանաւանդ մեր ժողովրդի համար: Եւ գիտակցում եւ այդ իրողութիւնը, որ մենք անցանք եւ տակաւին անցնում ենք դժուար օրերի միջից, մենք ունենք բազմատեսակ կարիքներ, դժուարութիւններ, թերացումներ, բայց այս բոլորին յաղթելու կամքն է, որ պիտի առաջնորդի մեզ գալիք տարիների մեր գործունէութեան ընթացքում: Այս երկիրը, Հայաստան Աշխարհը, մեր գոյութեան հետ միախառնուած մեր երկիրը, «մեղրի ու կաթի» երկիր չեղավ, եւ աշխարհումս ոչ մի երկիր մեղր ու կարագի երկիր չէ, ինչպէս ասում է Աստուածաշունչը: Այս բոլոր դժուարութիւններին յաղթելու կամքը մեր գլխաւոր կենսափիլիսոփայութիւնը, համոզումը եւ այդ համոզումը գործի վերածող նուիրումը պէտք է լինի: Մենք, բնականօրէն, այս պատմական հնգամեայ շրջանին այն բոլոր յաջողութիւնները, որ ձեռք բերեցինք, այդ յաջողութիւններով չպէտք է այնպէս տարուենք, որ մոռանանք մեր կարիքները, մեր անելիքները: Եւ դրա համար եւ կոչ եւ անում մեր ժողովրդի բոլոր պատկներին՝ Հայաստանում, այստեղ, մեր հարապատ երկրում՝ քաղաքամայր Երեւանում, Արարատի մարզում, Արմաւիրի, Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տաւուշի, Լոռիի, Վայոց Ձորի եւ Սիւնեաց Աշխարհի մարզերում բոլոր շրջանների եւ եկեղեցական թեւերի ժողովրդին, որ նրանք առաջնորդուեն ընդհանրական շահերից, հիմնականը կարողանան պատրոշել ժամանակաւորից, վաղանցուկ ուրիշ տեսակ հաշիւներից:

Ողջունելով մեր Հանրապետութեան ստեղծման, կառուցման այս առաջին հնգամեակը, եւ զգում եւ, որ մենք մտնում ենք մի նոր շրջան, եւ այդ նոր շրջանը պիտի լինի կառուցողական աշխատանքի շրջան, յառաջագնացութեան շրջան: Այս հինգ տարիները արժեւորենք նոր իրագործումներով, նոր նուաճումներով: Դրա համար երբ այժմ պատրաստում ենք մասնակցելու նախագահական ընտրութիւններին, եւ սա կարեւոր թուական է մեր համայնական կեանքում, եւ ցանկանում եւ, որ մեր սիրելի ժողովրդի պատկները, հոգեւորական լինեն թէ մտաւորական, պետական անձ լինեն թէ քաղաքական ոեւէ կազմակերպութեան անդամ, ուսուցիչ լինեն թէ արուեստագէտ, պաշտօնեայ թէ պարզ

աշխատատեղ կամ գործատու է գիւղերի մէջ ապրող ժողովուրդ, բոլորն անխտիր լծուենք դրական աշխատանքի: Ես հաւատում եմ, որ այն ազգերը մեծ կը լինեն, տոկուն կը լինեն եւ պարզացողական ընթացքով կը յառաջանան, ովքեր ընդհանրական շահը գերադասել գիտեն մասնակի շահերից: Ես էլ ձեզ հետ տեսնում եմ այն բոլոր բաց կողմերը, որոնք պէտք է լցուն: Պէտք է դարմանունք մեր ցաւերը: Դժգոհութիւններ ունենք բոլորն էլ: Բայց ես հաւատում եմ, իմ քառասունհինգ տարիների հոգեւորական ծառայութեան մէջ ես տեսել եմ, որ այն անձերը, որոնք պատասխանատուութեան մէջ են գտնուում, նրանք աւելի լաւ են իմանում մեր թերութիւնները, քան ոեւէ մի ուրիշ անձ: Ես ես ողջունում եմ մեր նախագահին, մեր պետութեան այն մտեցումը, որ, նկատելով թերացումները, իրենց գերագոյնն են անում եւ անելու են դրանց դարմանման համար: Մենք պէտք է մտենանք մեր պարտականութեանը հայրենիք կերտելու գաղափարով: Եթէ ուզում էք արժեւորել այս հնգամեակը, գործէք պատասխանատուութեան պատգամով, ընդհանրական շահերի գիտակցութեան մղումով եւ այդպէս դուք կատարեցէք մեր պարտականութիւնը, ոչ թէ առաջնորդուեք ժամանակաւոր դժգոհութիւնների այն մթնոլորտով, որով մենք երբէք չենք կարողանա ստեղծագործական, շինարար եւ պարզացողական մեծ գործեր կատարել:

Ես կոչ եմ անում ձեզ, իբրեւ հայութեան նոր պատկեր, լծուելու մեր աշխատանքին մեր բոլոր անհատական շահերից վեր՝ հայրենիքի, Եկեղեցու եւ ժողովրդի ընդհանրական շահերը նկատի ունենալով, եւ դրա համար իմ խօսքն աւարտում եմ աղօթքով՝ այդ աղօթքի բառերը վերցնելով մեր սրբապան հայրերի ծիսական գրականութեան միջից. «Յաւել ի մեզ, Տէր Ամենակալ, զհաւատ, զյոյս եւ զսէր եւ զամենայն գործս առաքի՛նութեան» /Ով Տէր, աւելացրու՛ մեր մէջ, պօրացրու հաւատքը, յոյսը եւ սէրը եւ նրանց հետեւութիւն եղող առաքինի գործերը/:

Այս մտեցումով պիտի շարունակենք այս հնգամեակը ծաղկեցնել նորանոր իրագործումներով՝ Աստուծոյ փառքի, մեր հայրենիքի վերաշինութեան եւ մեր ժողովրդի բարեկեցութեան համար եւ ընդհանուր մարդկութեան ծառայելու համար, յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

20.09.1996.